

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ  
ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ  
ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ  
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ  
HEALTH AND LABOR INSPECTION BODY  
OF THE REPUBLIC OF ARMENIA

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129  
☎ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ [info@hlib.am](mailto:info@hlib.am)

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի 2020 թվականի հունվարի 13-ի՝ «Տեսչական մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացվող 2019 թվականի տարեկան հաշվետվության վերաբերյալ մեթոդական ցուցումը հաստատելու մասին» թիվ 1-Լ հրամանը:

Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը (այսուհետ՝ Տեսչական մարմին) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշման համաձայն իր կանոնադրական գործառույթների շրջանակներում 2019 թվականի ընթացքում իրականացրել է ստորև նշված աշխատանքները.

I. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿՈՂՄԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԵՌԱՄՍՅԱԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱԶՄՎԱԾ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) գործունեության կատարողականի գնահատման հիմքում ընկած են Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների գործընթացին առնչվող առանձին ցուցանիշները և դրանց վերլուծությունները:

2019 թվականի համար Տեսչական մարմինը չի ունեցել ստուգումների տարեկան ծրագիր, իսկ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատվել է միայն ընթացիկ տարվա օգոստոսի 22-ին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության N 1124-Ն որոշմամբ: Հետևաբար՝ 2019 թվականին Տեսչական մարմնի գործունեության կատարողականը, ստուգումների գործընթացի բացակայությամբ պայմանավորված, չափորոշիչների գերակշիռ մասով գնահատվել է «0»:

Ստուգումների հետ չառնչվող չափորոշիչների վերաբերյալ կատարողականի գնահատումը սահմանափակվել է փաստացի ցուցանիշների արձանագրմամբ, քանի որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի արդյունքների հետ համեմատություն չի իրականացվել՝ 2018 թվականին կատարողականի գնահատման մեթոդաբանության բացակայության, համապատասխանաբար՝ կատարողականի գնահատում չիրականացնելու պատճառով:

Ստուգումների գործընթացին չառնչվող չափորոշիչներով կատարողականի արդյունքները հետևյալն են.

1) Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.

Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար լրացուցիչ մարդկային ռեսուրսներ և ֆինանսական միջոցներ չեն հատկացվել:

2) Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.

2019 թվականի ընթացքում իրականացվել է՝

	Վերահսկողության ոլորտ	Միջոցառումների թիվ	Այդ թվում սեմինար-դասընթաց	Մասնագետների թիվ	Ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների թիվ
1	Դեղերի շրջանառություն	59	21	23	769



ՀՀ ԱՌՈՂՋԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆԻ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ  
ՍԵՆՏՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ  
HEALTH AND LABOR INSPECTION BODY  
OF THE REPUBLIC OF ARMENIA

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129  
☎ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ [info@hlib.am](mailto:info@hlib.am)

2	Բժշկական սպասարկում	135	19	30	646
3	Բնակչ. սանիտարահամաճ. անվտանգության ապահովում	1109	17	29	800
4	Աշխ. առողջ. պահպ. և անվտանգ. ապահովում	383	52	66	517
	<b>Ընդամենը</b>	<b>1686</b>	<b>109</b>	<b>148</b>	<b>2732</b>

Նշված միջոցառումների իրականացման համար լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն հատկացվել:

3) Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկների քանակը.


Հայաստանի Հանրապետության կառավարությանը, համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացվել է 30 առաջարկություն:

4) Տեսչական մարմնի, Տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակը և դրանց արդյունքները.

2019 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից իրականացվել է 1674 վարչական վարույթ, որոնց վերաբերյալ բերվել է 62 բողոք (3,7%), այդ թվում՝ 26 բողոք ներկայացվել է Տեսչական մարմին, 36 բողոք՝ դատարան: Ըստ վերահսկման առանձին ոլորտների, պատկերը հետևյալն է.

Ոլորտներ	Բողոքների ընդհանուր թիվ	Այդ թվում՝	
		Տեսչական մարմին	Դատարան
Դեղերի շրջանառություն	18	4	14
Բժշկական սպասարկում	2	1	1
Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում	40	20	20

Աշխատողների առողջության պահպանում և անվտանգության ապահովում	2	1	1
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>62</b>	<b>26</b>	<b>36</b>



Տեսչական մարմին ներկայացված 26 բողոքից քննվել է 23-ը, բավարարվել է 10 բողոք:

Դատական կարգով ներկայացված բողոքների քննման արդյունքում ընդունվել է 13 որոշում, որից 8 բողոք մերժվել է, 5 բողոք բավարարվել է: Մնացած բողոքներն ընթացքում են: Բավարարված բողոքների վերաբերյալ Տեսչական մարմնի կողմից ներկայացվել են վերաքննիչ բողոքներ:

2019 թվականի ընթացքում Տեսչական մարմնի դեմ բերված և քննված բողոքների արդյունքները հետևյալն են.

Վարչական վարույթների թիվ	Բողոքների թիվ			Ընդունված որոշումներ	այդ թվում՝		Բավարարված բողոքներ		
	Ընդամենը	այդ թվում՝			ՏՄ	Դատ	Ընդամենը	այդ թվում՝	
		ՏՄ	Դատարան					ՏՄ	Դատարան
1674	62 (3,7%)	26	36	36	23	13	15 (41,7%)	10 (43,5%)	5 (38,5%)

II. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ  
2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով, որ Տեսչական մարմնի 2019 թվականի գործունեության ծրագիրը չի հաստատվել, ուստի 2019 թվականի տարեկան ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ:

III. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ  
ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԹԻՐԱԽՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով, որ Տեսչական մարմնի 2019 թվականի գործունեության ծրագիրը չի հաստատվել, ուստի Տեսչական մարմնի 2019 թվականի գործունեության տարեկան ծրագրով սահմանված թիրախներին հասնելու մասին տեղեկատվություն և արդյունքների վերլուծություն առկա չէ:

IV. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ  
ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեսչական մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածում վերահսկման բոլոր ոլորտներում իրականացվել է 1 673 իրազեկման աշխատանք ստորև նշված ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների շրջանում և հանրության համար, այդ թվում.

- 53 իրազեկման աշխատանք դեղերի շրջանառության և դեղագործական ոլորտում,
- 125 իրազեկման աշխատանք բժշկական սպասարկման ոլորտում,
- 921 իրազեկման աշխատանք բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում,

•574 իրազեկման աշխատանք աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում:

Տեսչական մարմնի իրավասությանը վերաբերող իրավական ակտերով սահմանված պահանջների վերաբերյալ բացատրական և կոնկրետ հարցերով իրազեկման մատուցման աշխատանքներ են կազմակերպվել թե մամուլի հաղորդագրությունների տեսքով ու Տեսչական մարմնի ֆեյսբուքյան պաշտոնական էջով և այլ միջոցներով ստացված հարցադրումներին ի պատասխան: Խորհրդատվությունն ու պարզաբանումները հիմնված են եղել մի շարք իրավական նորմերի վրա:

V. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով, որ Տեսչական մարմնի ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատվել է միայն ընթացիկ տարվա օգոստոսի 22-ին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության N 1124-Ն որոշմամբ, ուստի Տեսչական մարմինը վերահսկողության ոլորտում առկա ռիսկերի և կարևորագույն խնդիրների վերաբերյալ վերլուծություն չի իրականացրել:

VI. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ԱՌԱՋՆԱՑՆԵԼՈՎ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻ/ՄՊԱՌՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՀԱՆՋՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ (ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐԸ, ԴՐԱՆՑ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ և ԼՈՒԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ):

Տեսչական մարմնի խորհրդատվական աշխատանքների գերակշիռ մասը հաշվետու ժամանակահատվածում կազմել են սեփական նախաձեռնությամբ

իրականացված խորհրդատվական գործունեությունները, որի ժամանակ լուսաբանվել են ոլորտներին վերաբերվող ընդհանուր բնույթի հարցեր:

**- Ղեկերի շրջանառության և դեղագործական գործունեության ոլորտում՝**

Տեսչական մարմնի կողմից իրականացվել են խորհրդատվական աշխատանքներ դեղերի գրանցման, ներմուծման, մեծածախ և մանրածախ իրացման, դեղերի առաքմանը ներկայացվող տեխնիկական և մասնագիտական պահանջների հետ կապված դրույթների, ինչպես նաև դեղատոմսով բաց թողնվող դեղերի և դեղատանը ժամկետնանց դեղը պահպանելու վերաբերյալ:

**• Բժշկական սպասարկման ոլորտում՝**

Խորհրդատվական աշխատանքների ընթացքում քննարկվել են բժշկական փաստաթղթերի լրացման և վարման կարգի պահանջներին, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունում կիրառվող բժշկական փաստաթղթերը ՀՀ օրենսդրությամբ հաստատված ձևերին համապատասխանության և ախտաբանաանատոմիական գործառույթներին (ներառյալ պարտադիր կարգով իրականացվող ախտաբանաանատոմիական հերձումների անցկացման կարգի պահանջներ) վերաբերվող հարցեր:

**• Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում՝**

Տեսչական մարմնի կողմից իրականացվել են խորհրդատվություններ արտադրական և շինարարական կազմակերպությունների, գեղեցկության սրահների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների, կոմունալ սպասարկման կազմակերպության ներկայացուցիչների հետ ոլորտը կարգավորող համապատասխան իրավական ակտերի շրջանակներում:

**• Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում՝**

Տեսչական մարմնի կողմից իրականացվել են խորհրդատվական աշխատանքներ աշխատողների առողջության պահպանման, անվտանգության ապահովման վերաբերյալ՝ աշխատողներին աշխատանքի կոլեկտիվ և անհատական



պաշպանության միջոցների տրամադրման և կիրառման կարգի, աշխատավայրում տեղի ունեցած դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հաշվառման ու ծառայողական քննության կարգի, արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձանց պարտականությունների, վերելակների և դրանց շահագործման անվտանգության պահանջների տեխնիկական կանոնակարգի, շինարարական նորմատիվատեխնիկական ակտերի կանոնակարգի, մինչև 18 տարեկան անձանց, ինչպես նաև հղի կամ երեխային կրծքով կերակրող կանանց և երեխա խնամող աշխատողների համար երաշխիքների և արտոնությունների, աշխատողների պարտադիր բժշկական զննության անցկացման կարգի, աշխատողների հրահանգավորման և ուսուցման անցկացման կարգի և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի համապատասխան հոդվածների շրջանակներում:

Տնտեսավարողների/սպառողների կողմից պահանջված տեղեկատվությունը հիմնականում պայմանավորված է եղել Հայաստանի Հանրապետությունում գործող և տվյալ ոլորտները կանոնակարգող օրենսդրության պահանջների իրազեկված լինելու և վերջիններս ճիշտ կիրառելու, հավանական խախտումները բացառելու նպատակով:

Տնտեսավարողների/սպառողների շրջանում Տեսչական մարմնի կողմից իրականացված խորհրդատվական աշխատանքների իրականացման արդյունքում տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների շրջանում բարձրացել է իրազեկվածության մակարդակը:

Տեսչական մարմնի ղեկավարի 2019 թվականի հունվարի 19-ի թիվ N 1-Լ հրամանով տարեսկզբին գործարկվել է տեսչական մարմնի «Թեժ գիծ» ծառայությունը (010) 65-05-53 (13) հեռախոսահամարով: Տարվա ընթացքում գրանցվել է 351 զանգ: Ջանգերի գերակշիռ դեպքում քաղաքացիների հարցերը վերաբերել են աշխատանքային իրավունքի և սանիտարահիգիենիկ ոլորտի ամենատարբեր խնդիրներին: Ջանգերի ակտիվությունը կտրուկ բարձրացել է հուլիս ամսին (62 զանգ)՝ պայմանավորված ամռանը հանրային օբյեկտներում աղմուկի ավելացման,

սննդի որակի, վարակների հավանական ավելացման ու աղբի խնդիրների հետ: Մեծ թիվ են կազմել աշխատողի իրավունքներին վերաբերող հարցերը (12): Զանգերի վիճակագրությունը փաստում է, որ աստիճանաբար ավելանում են հատկապես աշխատանքային հարաբերություններին առնչվող հարցերը:

VII. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԵՏՈՒ  
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ՍՏԱՅՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տեսչական մարմնի կողմից իրականացվել են կանխարգելիչ միջոցառումներ իրազեկման և խորհրդատվության միջոցով՝ դեղերի շրջանառության և դեղագործական գործունեություն ոլորտում՝ 204, բժշկական սպասարկման ոլորտում՝ 290, բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում՝ 1676, աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում՝ 402 կանխարգելիչ գործողություններ,

Արարատի և Արմավիրի մարզերի 185 համայներին էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել են բերքահավաքի գործընթացում ընդգրկված մինչև 18 տարեկան աշխատողների համար աշխատանքային օրենսդրությամբ սահմանված երաշխիքների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև ուղարկվել է 396 գրություն, որից 101-ը՝ դպրոցական ուսումնական հաստատություններին՝ ջերմային ռեժիմի վերաբերյալ, 17-ը՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին՝ սուր շնչառական վարակների և գրիպի կանխարգելման միջոցառումների վերաբերյալ, 196-ը՝ դպրոցական և նախադպրոցական ուսումնական հաստատություններին՝ իրականացվող հակահամաճարակային միջոցառումների վերաբերյալ, 22-ը՝ համայնքների ղեկավարներին՝ խմելու ջրի լաբորատոր հետազոտությունների արդյունքում արձանագրված շեղումների վերաբերյալ, 17-ը՝ պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննությունների վերաբերյալ, 43-ը՝ ԱԳԼՃԿ-ների տնօրեններին՝ արձանագրված

խախտումների վերացման վերաբերյալ, ինչպես նաև գրություններ վերահուղարկավորման և վրահուղարկավորման թույլտվությունների վերաբերյալ:

Հերթափոխային եղանակով և 24 ժամյա աշխատանքային ռեժիմով իրականացվել են կանխարգելիչ միջոցառումներ Տեսչական մարմնի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերի (այսուհետ՝ ՍԲՀԿ) կողմից: ՍԲՀԿ-ները պաշտոնական կայքերի միջոցով մշտապես հետևել են այլ երկրներում համաճարակաբանական իրավիճակին:

Հաշվետու ժամանակահատվածում հսկողություն է իրականացվել 6 555 չվերթով, 765 580 ավտոտրանսպորտային միջոցներով և 240 գնացքներով ժամանած 2 799 103 ուղևորի և 9 038 անձնակազմի անդամների նկատմամբ՝ իրականացվել է ջերմաչափում, վիզուալ զննում, անհրաժեշտության դեպքում՝ հարցում, տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն:

Հայտնաբերվել է վարակիչ հիվանդությունների ախտանշաններ ունեցող (ջերմություն, ցանավորում) 383 անձ, որոնց մասին հաղորդվել է տարածքային ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններին՝ ախտորոշումը ճշտելու և հետագա հսկողություն սահմանելու նպատակով: Համաձայն Տեսչական մարմնի ղեկավարի 25.12.2018 թվականի թիվ 01/3515-18 հանձնարարականի, մասնավորապես ուժեղացվել է հսկողությունը կարմրուկի կլինիկական նշաններով կասկածելի դեպքերի վաղ հայտնաբերման նպատակով: Հսկողություն է իրականացվել 247 աճյունի տեղափոխման նկատմամբ՝ ուսումնասիրվել են փաստաթղթերը և տեղափոխման պայմանները:

Տեսչական մարմնի կողմից տնտեսավարողների, սպառողների, ինչպես նաև սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերում օդանավով, գնացքներով, ավտոտրանսպորտային միջոցներով ժամանած ուղևորի և նշված փոխադրման միջոցների անձնակազմի շրջանում իրականացված կանխարգելիչ միջոցառումները իրականացվել են տնտեսավարողների, սպառողների, Հայաստանի Հանրապետություն մուտք գործած ուղևորի և անձնակազմի շրջանում

հակահամաճարակային միջոցառումների պատշաճ ապահովման, ինչպես նաև կլինիկական նշաններով կասկածելի դեպքերի վաղ հայտնաբերման նպատակով:

Տեսչական մարմնի կողմից տնտեսավարողների, սպառողների, ինչպես նաև սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերում օդանավով, գնացքներով, ավտոտրանսպորտային միջոցներով ժամանած ուղևորի և նշված փոխադրման միջոցների անձնակազմի շրջանում իրականացված կանխարգելիչ միջոցառումներն կազմակերպման արդյունքում կանխվել են Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության սահմաններից ներթափանցվող հավանական համաճարակի դեպքերի տարածումը:

#### VIII. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1) Հաշվի առնելով, որ Տեսչական մարմինը 2019 թվականին չի ունեցել հաստատված ստուգաթերթեր և Տեսչական մարմնի ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատվել է միայն ընթացիկ տարվա օգոստոսի 22-ին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության N 1124-Ն որոշմամբ, որի արդյունքում էլ բացակայել է հաշվետու տարվա ստուգումների տարեկան ծրագիրը և չեն կատարվել ստուգումներ, ուստի Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի 2020 թվականի հունվարի 13-ի՝ «Տեսչական մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացվող 2019 թվականի տարեկան հաշվետվության վերաբերյալ մեթոդական ցուցումը հաստատելու մասին» թիվ 1-Լ հրամանի 3-րդ կետի, 8-րդ ենթակետի ԸաԸ, ԸբԸ, ԸգԸ, ԸդԸ և ԸեԸ պարբերությունների վերաբերյալ տեղեկություն առկա չէ:

2) ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԴՐԱՆՔ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Տեսչական մարմնում հաշվետու ժամանակահատվածում ստացվել են դիմում-բողոքներ, որոնցից օրենքով սահմանված կարգով որոշները վերադարձվել, վերահասցեագրվել, կարճվել և տրվել են համապատասխան պարզաբանումներ, իսկ մնացած դիմում-բողոքների հիման վրա և սեփական նախաձեռնությամբ հարուցվել են վարչական վարույթներ, որոնց արդյունքում հայտնաբերված խախտումների համար տնտեսավարող սուբյեկտներին տրվել են կարգադրագրեր՝ խախտումները վերացնելու համար: Այսպես.

#### **Դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության ոլորտում**

- ստացված դիմում (բողոքների) քանակը՝ 24,

Տեսչական մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով հարուցվել է 271 վարչական վարույթ (Տեսչական մարմնի նախաձեռնությամբ 236, դիմումի հիման վրա՝ 35): Հարուցված վարչական վարույթներից՝ խախտումները վերացնելու համար տրվել է 50 կարգադրագիր՝ առաջադրանք տալու վերաբերյալ, խախտման բացակայության հիմքով՝ 207 վարույթ կարճվել է, ընթացքի մեջ է 14 վարչական վարույթ:

#### **Բժշկական սպասարկման ոլորտում**

- ստացված դիմում (բողոքների) քանակը՝ 36,
- վերադարձված դիմում (բողոքների) քանակը՝ 6,
- վերահասցեագրված դիմում (բողոքների) քանակը՝ 11:

Տեսչական մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով հարուցվել է 309 վարչական վարույթ (Տեսչական մարմնի նախաձեռնությամբ 290, դիմումի հիման վրա՝ 19): Հարուցված վարչական վարույթներից՝ խախտումները վերացնելու համար տրվել է 64 կարգադրագիր՝ առաջադրանք տալու վերաբերյալ, խախտման բացակայության հիմքով՝ 234 վարույթ կարճվել է, ընթացքի մեջ է 10 վարչական վարույթ, կասեցվել է 1:

**Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում**

- ստացված դիմում (բողոքների) քանակը՝ 161,
- վերադարձված դիմում (բողոքների) քանակը՝ 26,
- վերահասցեագրված դիմում (բողոքների) քանակը՝ 50 :

Տեսչական մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով հարուցվել է 1 069 վարչական վարույթ (Տեսչական մարմնի նախաձեռնությամբ 960, դիմումի հիման վրա՝ 109): Հարուցված վարչական վարույթներից՝ խախտումները վերացնելու համար տրվել է 677 կարգադրագիր՝ առաջադրանք տալու վերաբերյալ, խախտման բացակայության հիմքով՝ 334 վարույթ կարճվել է, ընթացքի մեջ է 58 վարչական վարույթ:

**Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում**

- ստացված դիմում (բողոքների) քանակը՝ 42,
- վերադարձված դիմում (բողոքների) քանակը՝ 6,
- վերահասցեագրված դիմում (բողոքների) քանակը՝ 8,
- պարզաբանում ստացած դիմում (բողոքների) քանակը՝ 19:

Տեսչական մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով հարուցվել են 25 վարչական վարույթ (Տեսչական մարմնի նախաձեռնությամբ 21 դիմումի հիման վրա՝ 4): Հարուցված վարչական վարույթներից՝ խախտումները վերացնելու համար տրվել է 17 կարգադրագիր՝ առաջադրանք տալու վերաբերյալ, խախտման բացակայության հիմքով՝ 8 վարույթ կարճվել է:

Տեսչական մարմնի կողմից, օրենքով սահմանված կարգով, 2017 թվականին վարչական վարույթներ չեն հարուցվել, 2018 թվականին հարուցվել են թվով 208, իսկ 2019 թվականին՝ թվով 1674 վարչական վարույթներ: Հետևաբար, Տեսչական մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով 2018 թվականի համեմատ 2019 թվականին

հարուցված վարչական վարույթների թիվն աճել է 1466-ով, այսինքն գրանցվել է շուրջ 704.8 % աճ:

Տեսչական մարմնի գործունեության 2020 թվականի տարեկան ծրագրի շրջանակներում և հիմք ընդունելով 2019 թվականին հաստատված 2020 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը՝ Տեսչական մարմինը պլանավորվել է 2020 թվականին իրականացնել ռիսկի վրա հիմնված թվով 191 ստուգում, իսկ օրենքով սահմանված կարգով այլ հիմքերի պայմաններում մասնագիտական ստուգում, ինչպես նաև դիմումների (բողոքների) հիման վրա և օրենքով սահմանված կարգով Տեսչական մարմնի նախաաձեռնությամբ շուրջ 2000 (վիճակագրության տվյալներից ելնելով) վարչական վարույթի հարուցում: Նշված 2020 թվականի տարեկան ծրագրի շրջանակներում Տեսչական մարմինը նախատեսել է բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական սպասարկման, դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության ու աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում ռիսկերի կառավարման և Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության և բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական սպասարկման, դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության ու աշխատողների առողջության և անվտանգության ապահովման ոլորտներում կանխարգելիչ միջոցառումների իրականացման ընթացքում իր կողմից իրականացվող գործառնություններն առավել արդյունավետ ծառայեցնելուն և Տեսչական մարմնի զարգացման գործընթացին ու ենթակառուցվածքների բարելավմանը:

3) ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՎԵԼ ՀԱՃԱԽ ԿԱՏԱՐՎՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԿԱՍ ՇԵՂՈՒՄՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՎԵՐՀԱՆԵԼ ԵՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ



ՀՀ ԱՌՈՂՋՄԱՐՈՂ և ԱՇԽԱՏԱՆԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ  
HEALTH AND LABOR INSPECTION BODY  
OF THE REPUBLIC OF ARMENIA

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129  
☎ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ [info@hlib.am](mailto:info@hlib.am)

Տեսչական մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվող գործունեության արդյունքում պարզվել է, որ տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող խախտումները հիմնականում պայմանավորված են օրենսդրության պահանջների չիմացությամբ և ոչ բավարար իրազեկմամբ: Ըստ ոլորտների.

- **Դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության ոլորտում** տնտեսավարող սուբյեկտների կողմից ըստ տարածվածության առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են՝

«Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով, 21-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, 23-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 202-Ն որոշման 4-րդ, 19-րդ, 73-րդ կետերով սահմանված պահանջները:

Տեսչական մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտների և դրանց ծառայողների նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցները՝ խախտումները վերացնելու համար տրվել է 50 կարգադրագիր, ընդունվել է 35 որոշում տուգանք նշանակելու մասին:

- **Բժշկական սպասարկման ոլորտում** տնտեսավարող սուբյեկտների կողմից ըստ տարածվածության առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են՝

- բժշկական փաստաթղթերի լրացման և վարման կարգի, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում կիրառվող մի շարք բժշկական փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» N35-Ն հրամանի պահանջներ,

- լաբորատոր-գործիքային հետազոտությունները իրականացվում են հիմնականում բազմաֆունկցիոնալ նորացված տեխնիկական միջոցներով, իսկ լաբորատոր-գործիքային հետազոտությունների արդյունքների գրանցման ձևաչափերը հաստատվել են 2013 թվականին և կորցրել են իրենց արդիականությունը՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին»



Հայաստանի Հանրապետության օրենքի 19.3 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի,  
Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի  
նոյեմբերի 25-ի Ուաբորատոր ախտորոշիչ հետազոտությունների արդյունքում  
կազմվող բժշկական ձևերը հաստատելու մասին՝ N76-Ն հրամանի հավելված 1-ի ձև  
11-ի և ձև 12-ի, հավելված 5-ի,

- ՌԲնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար և (կամ)  
արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում  
հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տրամադրման չափորոշիչը  
հաստատելու մասին՝ N 71-Ն հրամանի 2-րդ գլխի 10-րդ կետի թիվ 7-րդ ենթակետի,  
Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2014 թվականի  
փետրվարի 14-ի Ուձիվանդանոցային բժշկական կազմակերպություններում կիրառվող  
մի շարք բժշկական փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին՝ 02-Ն հրամանի  
հավելված N 1-ի ձև 1-ի և 2-ի, Հայաստանի Հանրապետության առողջապահության  
նախարարի 2013 թվականի հուլիսի 24-ի ՈՊետության կողմից երաշխավորված  
անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բնակչությանը  
ցուցաբերվող շտապ բժշկական օգնության տրամադրման չափորոշիչը, շտապ  
բժշկական օգնության կանչի թերթիկի ձևը, իրազեկման թերթիկի ձևը, շտապ  
բժշկական օգնության դիսպետչերի գործառույթների նկարագիրը հաստատելու  
մասին՝ N 39-Ն հրամանի հավելված 2-ի, Հայաստանի Հանրապետության  
առողջապահության նախարարի 2008 թվականի հոկտեմբերի 15-ի «Հայաստանի  
Հանրապետությունում իմունականիսարգելման գործընթացի կազմակերպում և  
իրականացում» 3.1.6.009-08 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի  
հաստատման մասին թիվ 20-Ն հրամանի 51-րդ կետի և հավելված 18-ի պահանջները:

Տեսչական մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտների և դրանց  
ծառայողների նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցները՝  
խախտումները վերացնելու համար տրվել է 64 կարգադրագիր, ընդունվել է 6 որոշում  
տուգանք նշանակելու մասին:

• **Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում** հաշվետու ժամանակահատվածում տնտեսավարող սուբյեկտների կողմից ըստ տարածվածության առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումները կամ շեղումները՝

- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի մարտի 06-ի թիվ 138 հրամանով հաստատված «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմեր,

- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 51-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում հելմինթոզների համաճարակաբանական հսկողություն» ՍԿ N 3.1.1-032-2017 սանիտարահամաճարակային կանոններ և նորմեր,

- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանով հաստատված «Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասազերծմանը և թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման, թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.1.7.002-09 սանիտարական կանոններ և նորմեր,

- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2006 թվականի օգոստոսի 16-ի թիվ 933-Ն հրամանով հաստատված «Ռադիոհաճախականության տիրույթի էլեկտրամագնիսական ճառագայթումներ (ՌՀԷՄՃ) N 2.1.8-010-06 սանիտարական կանոններ և նորմեր,

- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի թիվ 03-Ն հրամանով հաստատված «Բժշկական թափոնների

գործաճանձանքը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոններ և նորմեր,

- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանով հաստատված «Բժշկական նշանակության արտադրատեսակների մաքրմանը, ախտահանմանը, նախամանրէագերծման մշակմանը և մանրէագերծմանը ներկայացվող պահանջներ» N 3.1.1-029-2015 սանիտարական կանոններ և հիգիենիկ նորմեր:

- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 25 դեկտեմբերի 2002թ N 876 հրամանով հաստատված «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա 2-1 սանիտարական նորմերի և կանոնների 3.2 կետով սահմանված պահանջների խախտում: Պատճառը՝ համայնքների ղեկավարների իրազեկվածության բացակայությունն է, ինչպես նաև ջրամատակարարման համակարգերի սպասարկման ոչ պատշաճ իրականացումը:

- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 16.04.2009 թվականի N 06-Ն հրամանով սահմանված պահանջների խախտումներ: Պատճառը՝ տնտեսավարողների իրազեկվածության բացակայությունն է, ինչպես նաև վերոնշյալ գործունեության ոչ պատշաճ իրականացումը:

- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով հաստատված «Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների)» N 2.III.1 սանիտարական նորմերի և կանոնների պահանջների խախտումներ: Պատճառը իրազեկվածության բացակայությունն է և ոչ բավարար շենքային պայմանները:

Տեսչական մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտների և դրանց ծառայողների նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցները՝

խախտումները վերացնելու համար տրվել է 677 կարգադրագիր, ընդունվել է 444 որոշում տուգանք նշանակելու մասին:

• **Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում** տնտեսավարող սուբյեկտների կողմից ըստ տարածվածության առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումները կապված են աշխատողներին աշխատանքի կոլեկտիվ և անհատական պաշպանության միջոցների տրամադրման և կիրառման հետ: Դրանք են.

- ՀՀ աշխատանքային օրենսգրքի 248-րդ հոդվածի 3-րդ մասով, 261-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 23-ի N 458-Ն որոշման 2-րդ հավելվածի 2-րդ բաժնով սահմանված պահանջները,

- Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 23-ի թիվ 458-Ն որոշման, Տեղի ունեցած դժբախտ դեպքի պատճառները պարզելու նպատակով իրականացված ծառայողական քննության նյութերը Տեսչական մարմին չներկայացնելը,

- ՀՀ աշխատանքային օրենսգրքի, 249-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 15-ի N 1089-Ն որոշման 1-ին հավելվածի 6-րդ կետով սահմանված պահանջները, այն է՝ ապահովել նախնական բժշկական գննությունը բոլոր այն անձանց համար, ովքեր աշխատելու են Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 15-ի N 1089-Ն որոշման 2-րդ հավելվածի ցանկում ներառված վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության պայմաններում,

- Գործատուի կողմից աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության վերաբերյալ ներքին իրավական ակտերի չընդունելը:

Տեսչական մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտների և դրանց ծառայողների նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցները՝

խախտումները վերացնելու համար տրվել է 17 կարգադրագիր, ընդունվել է 12 որոշում տուգանք նշանակելու մասին:

## IX. ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեսչական մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանը և քաղաքականություն մշակող պետական մարմիններին (վերջիններիս առաջարկով, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ) ներկայացվել են օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ: Այսպես.

### • Տեսչական մարմնի կողմից ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի ներդրման վերաբերյալ

Ոչայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին՝ ՀՀ օրենքի 2.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջների համաձայն Տեսչական մարմնի կողմից մշակվել և հաստատման է ներկայացվել Ոչայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 19-ի N 522-ն և 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 1486-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որը Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1124-Ն որոշմամբ հաստատվել է:

Համաձայն Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի, Տեսչական մարմնի ղեկավարի 2019 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 2763-Ա հրամանով հաստատվել է Տեսչական մարմնի ռիսկի վրա հիմնված ստուգումների

մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների հաշվարկման և գնահատման կարգը:

Կազմվել, հաստատվել և հրապարակվել է Տեսչական մարմնի 2020 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը:

**• Դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության ոլորտում**

Հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի կազմում և Տեսչական մարմինների համակարգման գրասենյակ ներկայացում:

Հայաստանի Հանրապետության դեղերի մասին օրենքում՝ Դեղերի անվտանգության, վերահսկողության արդյունավետության, ԵԱՏՄ-ից ներմուծվող դեղերի տվյալների բազային հասանելիություն տրամադրելու, վարչարարություն իրականացնելու համար անհրաժեշտ հայցվող տեղեկատվությունը Տեսչական մարմնին տրամադրելու և դեղեր ներմուծողների կողմից համապատասխանության հավաստագրի համարի ու դեղի սերիայի «Վերո սիսթեմ» համակարգ պարտադիր մուտքագրման ենթակա դարձնելու մասին և ԵԱՏՄ տարածքից ներմուծված ու տարածքում իրացնելը չթույլատրված դեղերի ապօրինի իրացումը կանխելու և մերժման Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունից հրամանները ստանալու վերաբերյալ:

Մշակվել և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ է ներկայացվել դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման նկատմամբ իրականացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումների նախագծեր՝ մասնագիտական ստուգում իրականացնելու նպատակով:

**- Բժշկական սպասարկման ոլորտում**

Մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել Բժշկական սպասարկման ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման նկատմամբ

իրականացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծեր՝ մասնագիտական ստուգում իրականացնելու նպատակով:

**- Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում**

Ներքոհիշյալ սանիտարական կանոնների և նորմերի պահանջների կատարման վերաբերյալ՝

Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի օգոստոսի 12-ի N°42-Ն հրաման, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի նոյեմբերի 29-ի N°804 հրաման, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրաման, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857 հրաման, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 06.03.2002թ. N 138 հրաման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 27-ի N 347-Ն որոշում, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 25.12.2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրաման, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2017 թվականի մայիսի 12-ի N 12--Ն հրաման, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 05.12.2011 թվականի դեկտեմբերի 5-ի N 25-Ն հրաման, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի N 03-Ն հրաման, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2011 թվականի հուլիսի 16-ի N13-Ն հրաման, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2008 թվականի հոկտեմբերի 15-ի N 20-Ն հրաման, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2009 թվականի ապրիլի 16-ի N

06-Ն հրաման, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 01.10.2010 թվականի հոկտեմբերի 01-ի N 21-Ն հրաման:

Մշակվել և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ է ներկայացվել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման նկատմամբ իրականացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծեր՝ մասնագիտական ստուգում իրականացնելու նպատակով:

**• Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում**

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով առաջարկություններ են ներկայացվել ՀՀ Ազգային ժողովի առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովին:

Մշակվել և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի 1223-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 18-ի N 413-Ն որոշմամբ:

Մշակվել և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ է ներկայացվել աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման նկատմամբ իրականացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծեր՝ մասնագիտական ստուգում իրականացնելու նպատակով:



Տեսչական մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածում օրենսդրական առաջարկներ են ներկայացվել ռիսկի համակարգի ներդրման վերաբերյալ, որի նպատակն է սահմանել, բացահայտել և վերլուծել Տեսչական մարմնի վերահսկողության ենթակա բնագավառների ռիսկերը, դասակարգել տնտեսավարող սուբյեկտները՝ ըստ ռիսկայնության խմբերի (բարձր, միջին, ցածր), ըստ գործունեության ոլորտների և ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշների վարել Տեսչական մարմնի վերահսկողության ենթակա բնագավառներում գործող բոլոր տնտեսավարող սուբյեկտների տվյալների բազա, ստուգումների ծրագիրը կազմել ռիսկի համակարգի միջոցով՝ ստուգումները նպատակաուղղելով դեպի առավել ռիսկային ոլորտները և վերահսկման ենթակա տնտեսավարող սուբյեկտները և ստուգումների միջոցով նվազեցնել տնտեսավարող սուբյեկտների ռիսկի աստիճանը՝ մինչև առավել ցածր հնարավոր ռիսկի մակարդակը: Տեսչական մարմնի կողմից օրենսդրական առաջարկներ (նախագիծ) են ներկայացվել նաև ռիսկի հիման վրա և օրենքով սահմանված կարգով այլ հիմքերի պայմաններում մասնագիտական ստուգումների, ինչպես նաև դիմումների (բողոքների) հիման վրա և օրենքով սահմանված կարգով Տեսչական մարմնի նախաաձեռնությամբ վարչական վարույթների, ինչպես նաև իրազեկման և խորհրդատվական աշխատանքների իրականացման ընթացքում բարձրացված հարցերի և օրենսդրական կարգավորման անհրաժեշտությունից ելնելով:

## X. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ

ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱԴԱՆՆԵՐԻ

ԿՈՂՄԻՑ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

2019 թվականի ընթացքում Տեսչական մարմին ներկայացված բողոքները ուղղված են եղել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության

ապահովման, դեղերի շրջանառության վերահսկողության ոլորտներում ընդունված վարչական ակտերը վերացնելու պահանջներին: Ներկայացվել է 36 հայց, որոնցից 1-ը մերժվել է, ընթացքի մեջ են գտվում 45 դատական գործեր (այդ թվում 2018 թվականին ներկայացված հայցերից): Վերադասության կարգով ներկայացված բողոքների շրջանակներում իրականացվել են 27 վարչական վարույթներ, որոնցից 10-ը բավարարվել է, իսկ 8-ը մերժվել, նոր քննության է ուղարկվել 4-ը, սույժի միջոցը փոփոխվել է 1 գործով: